ՄԱԳԴԱԼԻՆԱ ՎԱՀԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրությունը ծանր կորուստ կրեց: Կյանքից անժամանակ հեռացավ խմբագրության ավագ խմբագիր Մագդալինա Վահանի Հակոբյանը: Նա ծնվել է 1948թ. փետրվարի 25-ին, Վրաստանի Հանրապետության Ախալցխայի շրջանի Ծղալթբիլա գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: 1956թ. ընդունվել է տեղի հայկական դպրոցը և ավարտել 1966թ., ոսկե մեդալով: 1966թ. ընդունվել և 1971թ. բարձր առաջադիմությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Իր աշխատանքային գործունեությունը Մագդալինա Հակոբյանը սկսել է 1972թ., իբրև ավագ սրբագրիչ: ՀՀ ԳԱԱ հրատարակչությունում նա աշխատել է մինչև 1981թ.: Մագդալինա Հակոբյանի կյանքի ու աշխատանքային գործունեության վերջին քսան տարիներն անխզելիորեն կապված էին ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրության հետ, սկզբում՝ գրական աշխատողի, իսկ վերջում՝ ավագ խմբագրի պաշտոնով:

Ինչպես հրատարակչությունում, այնպես էլ «Լրաբերի» խմբագրությունում աշխատելիս Մագդալինա Հակոբյանն իր մարդկային բարձր առաքինությունների և մասնագիտական խոր գիտելիքների շնորհիվ վայելում էր ինչպես գործընկերների, այնպես էլ հեղինակների ջերմ սերն ու հարգանքը: Մագդա Հակոբյան շնորհաշատ անհատին բնորոշ էր ոչ թե իրեն մարդկանց մեջ, այլ՝ մարդն իր մեջ սիրելը, և նա պատրաստ էր ըստ կարելվույն օգտակար լինել բոլոր նրանց, ովքեր ունեին իր աջակցության կարիքը: Ունենալով անուրանալի լրագրողական ձիրք՝ «Լրաբերում» նա հաճախ էր հանդես գալիս հանրապետության գիտական կյանքը լուսաբանող լրատվությամբ և այլ հրապարակումներով: Մագդա Հակոբյանի՝ խորապես մարդկային անձնավորության և բոլորիս սիրելի մեր գործընկերոջ հիշատակն է միայն, որ անզոր է ջնջելու անագորույն ճակատագիրը:

«Լրաբեր հասարակական գիտությունների»
հանդեսի խմբագրություն,
խմբագրական խորհուրդ